ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 113

ք. Երևան 01.04.2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններին որպես միակ մասնակից հայտ է ներկայացրել Ա/Ձ Աղաբաբյան Լյովան /ՀՎՀՀ՝ 32533166, գործունեության հասցե՝ ՀՀ ք.Երևան, Անդրանիկի 93 բն.11 (այսուհետ՝ Մասնակից)/:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակցի հայտը գնահատվել է բավարար և Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով հայտարարվել է ընտրված մասնակից: Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետում՝ էլեկտրոնային գնումների www.armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցմամբ վերջինիս ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո՝ սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ա/Ձ Աղաբաբյան Լյովան պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ գնահատող հանձնաժողովի 21.03.2024թ.-ի որոշմամբ վերջինս զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հաշվի առնելով, որ Ա/Ձ Աղաբաբյան Լյովան, որպես ընտրված մասնակից զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությունը, որոշում եմ՝

Ա/Ձ Աղաբաբյան Լյովային ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ